

Նարե Աթոյան

Եռացող ջրին ավելացնում են մեկ գդալ սուրճ, մեկ կիլոգրամ շաքարավազ, հետո ջազվեի պարունակությունը արհեստականորեն դատարկում են նարնջաշականակագույն բաժակիս մեջ, որին միշտ սիրահետում է COFFEE մակագիրն, ու շտապում պայմանականորեն իմ մյուս կեսը համարվող համակարգչիս մոտ:

- Ինձ համար նորից սուրճ չե՞ս բերել,- հարցնում է նա:
- Ախր դու ո՞ր օրվա սուրճ խմողն ես,- փորձում են ազատվել նրանից:
- Բայց դու խոստացել ես, Նարե, հիշու՞մ ես այն օրը,- ավելի տխուր ձայնով ասում է համակարգիչս՝ սենյակիս միակ «կենդանի» արարածը:
- Դե էլ մի տրտնջա, եղածը մեկ բաժակ սուրճ չի՞, կբերեմ էլի,- արհամարհական տոնով հեզնում են ես:
Նա լռում է, հասկանում են, որ նեղսրտում է, բայց ի՞նչ անեն, ես այդքան ժամանակ ունե՞մ, հազիվ են իմ գործերը հասցնում:
COFFEE –ն սկսում է սիրահետել նաև ինձ ու, ես միանգամից խորանում են գործերիս մեջ՝ փորփրելով սիրելի կեսիս գրեթե բոլոր «օրգանները»:

Եռացող ջրին ավելացնելու համար սուրճ չկա, միայն՝ երկու գդալ շաքարավազ:

- Այ քեզ փորձանք, - զարմանում են ես, թե քրոջս՝ ինձ համար բերած յոթ տուփ սուրճն ով խմեց:
- Դե լավ, ինչ արած, վազեմ մոտակա խանութ ու գամ, - նյարդայնացած ասում են ես ու, տարօրինակ բնավորությանս հետ մշտապես հարմարվող համակարգչիս թողնելով մենակ՝ ինձ նետում են փողոց:
- Բարև, Նարե, ու՞ր ես, չես երևում,- հարցնում է ծանոթ վաճառողուհին,- ամեն ինչ լա՞վ է:
- Հրաշալի,- ժպտում են նրան ու շտապում ավելացնել,- մեկ տուփ սուրճ տա՞ս, ես գնամ:

COFFEE մակագիրն ուշադիր լսում է, թե ես հաղթողի ոգևորվածությամբ ինչպես են պատմում վաճառողուհու հարցերից կատարած փախուստիս մասին: Այդ ամենը երկուսիս էլ այնքան զվարճալի է թվում, որ ծիծաղից թուլացած ես ընկնում են արոռիս վրա՝ սուրճիս բաժակը հազիվ հարմարեցնելով սեղանին:

«Ներիր ինձ սիրելի Նարե»,- հանկարծ կարդում են ես սեղանիս վրա դրված փոքրիկ թղթիկի վրա,- «Ստիպված են լքել քեզ, քանի որ ես քեզ չափազանց շատ են սիրում...»:

- Ո՞վ է գրել,- զարմանում են ես ու անթարթ հայացքով նայում են շուրջս՝ հեղինակին գտնելու հույսով:

- Նա,- նարնջաշականակագույն բաժակիս ունկը մատնացույց է անում իմ կեսին:
- Ինչպե՞ս,- ապշում եմ ես,- ու՞ր է իմ համա- համա- համաաաա... կար ...գիջը...

Ձեռքս եմ վերցնում թղթիկն ու նայում եմ անսովոր ձեռագրին. **«Լուսամուտը բացիր, Նարե, տես ինչ գեղեցիկ է գարունը...»** ու ես ակամայից մոտենում եմ լուսամուտին. **«Գնա՛ դուրս, շնչի՛ր գարունը, քայլի՛ր, նայի՛ր մարդկանց, լսի՛ր գարնան երգը, մի՛ ափսոսա ժամանակ...»**: Նորից եմ աչք գցում սեղանիս՝ համոզվելու, որ համակարգիչս իրոք լքել է ինձ:

- Ե՞րբ հասցրեց,- ափսոսանքով հարցնում եմ ինքս ինձ-, ախր մեկ րոպե տևեց խանութ գնալը:

«Գնա՛, Գարունն սպասում է քեզ... չմտաժողովե՛ս, ես շուտով կգամ, մենք միասին քո բոլոր գործերն ավարտին կհասցնենք...»,- ավարտում եմ ընթերցումն ու կատարվածն այնքան անսպասելի ու տարօրինակ եմ համարում, որ չեմ էլ փորձում մտածել դրա շուրջ:

Փոխարենը գտնում- հագնում եմ միակ ծաղկավոր զգեստս ու անհամբեր վազում եմ դուրս:

Հայացքով անթաքույց, շնչառությանս համահունչ, քայլերիս համընթաց, փնտրում եմ նրան...դիմավորում է Գարունն ինձ, ու գրկում եմք իրար. նեղացած ձայնով Գարունս մեղմ շնջում է. **«Ինչու՞ այսքան ուշացար, Նարե, չգիտե՞ս, որ Գարունը քեզ շա՛տ է սիրում»**:

«Ես էլ քե՛զ, Գարուն, ես էլ քե՛զ...»